ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Ակնալիճ, (093) 484880, aknalich.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

22 հոկտեմբերի 2021թվական N 106

ԱԿՆԱԼՃԻ << ՀՐԱՇՄԱՆՈՒԿ >> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N02-Ն հրամանով հաստատված հավելվածի 1-ին և 10-րդ կետերի պահանջով.

Որոշում եմ՝

1. 2021 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանի վարչական շենքում՝ ժամը 11:00-ին անցկացնել Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ՝ համաձայն հավելվածի:
2. Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմի միջոցով և այն իրականացնելու համար նախատեսված դրույթների կատարման անմիջական պատասխանատու է նշանակվում Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ.Շառոյանը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին (Գ.Շառոյանին)՝ Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակել http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային, պետական լիազոր մարմնի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի, ինչպես նաև Ակնալճի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքում՝ մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ և փակցնել համայնքի ղեկավարի և ավագանու նստավայրում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ

ՀՀ Արմավիրի մարզի
Ակնալիճ համայնքի ղեկավարի
2021 թվականի հոկտեմբերի 22-ի
N 106 որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Ակնալճի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Արամվիրի մարզի **Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ** համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) տնօրենի (այսուհետ՝ Տնօրեն) թափուր պաշտոն զբաղեցնելու համար 2021 թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 11:00-ին, Ակնալճի համայնքապետարանի շենքում (Ակնալիճ համայնք, Շահումյան փ. 2 շ.) կանցկացվի մրցույթ **Ակնալճի << Հրաշամանուկ >> մանկապարտեզ** համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար ներկայացվող պահանջները բավարարող, գրական հայերենին տիրապետող, գործունակ, 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, ովքեր ունեն՝

1) բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երկու տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ՝ հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի N416-Ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածի 2-րդ գլխի 3-րդ կետով սահմանված պահանջները.

2) <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով սահմանված չափանիշները բավարարող անձը.

3) իրենց պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, համապատասխան ոլորտի ՀՀ օրենսդրություն և այլ իրավական ակտեր).

4) տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

5) ֆինանսատնտեսական գործունեության իրականացման կարողություն.

6) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

7) աշխատանքի կազմակերպման և ղեկավարման անհրաժեշտ հմտություններ.

8) ենթակաների հետ վարվելու անհրաժեշտ էթիկայի կանոնների իմացություն.

9) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

<u>Դիմող քաղաքացիները Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմ պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝</u>

1) դիմում.

2) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

3) քաղվածք աշխատանքային գրքույկից կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին.

4) ինքնակենսագրություն.

5) անձնագրի, բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի) պատճենները.

6) տեղեկանք՝ մշտական բնակության վայրից.

7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Քաղաքացին մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձնագրով կամ անձը հաստատող այլ փաստաթղթով:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 9:00-18:00-ն, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ը ժամը 18:00-ն:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները տեղեկություններ և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմ (ՀՀ Արմավիրի մարզ, Ակնալիճ համայնք, հեռ. 093484880):

<u>Ակնալճի համայնքապետարանի աշխատակազմ</u>